

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Խոզն ու եզը

Խոզն ի՞նչ գլուխ ունի, որ ինչ գրից տա,
Բայց մեկ օր եզին սկսեց խրատ տալ նա:
Խոզ ու խրատ՝
Տո անհավատ:
Լսի՛ր՝ սի՛րելի՝ սատանին նալաք .
Խոզ փիլիսոփա քի՞չ կան՝ բե՛մուրվաք:
«Իրավ որ եզն ես՝ հո սուտ չեն ասում
Մարդիք ու կապում, լծում քեզ, տանջում:
Արաբա ու սելն՝ քո բեռն ու բաժին.
Վար ու ցանք, քութան միշտ քո շլինքին:
Ախըր խերդ ի՞նչ ա, կուզեմ իմանալ.
Շատ օր սոված ես դու կալսում մեր կալն:
Տուն որ գալիս ես՝ մեկ բուռը խոտ էլ
Չեն ուզում քեզ տան: Քո բերած մալն էլ
Ձեռիցըդ խլում, քեզ մաղբուն անում,
Իրանք վայելում, քեզ սոված թողում»:—
«Մարդի հախիցը էդպես չեն վեր գալ.
Քանի ձեռիցդ կգա, քե՛զ հալալ:
Քանդիր գյոռբեգյոռ մարդի տունն ու տեղը,
Ծծի՛ր նրա արինն, քամի՛ր նրա եղը:
Ոտնատակ արա՛, քանդի՛ր հանդն ու բաղը,

Յատուկ Դոէմ

Կե՛ր նրա մասիլն, հանի՛ր աչքի պտուղը,
Ո՛չ հավին խնայի՛ր, ո՛չ նրա ճվին:
Ի՞նչ ես հարցնում, մարդ միշտ իր գլխին
Պետք է հանապազ մուղայիթ կենա,
Աշխարքը դմակ, ձեռըդ դանակ ա,
Որդիանց հասնի, կե՛ր, ու փորդ արա՛:
Ո՞վ ըլի, ըլի, ի՞նչ ես ֆիքր անում,
Էսպես էկել ա աշխարն՝ էսպես գնում:
Թե տեսնող ըլի, գլուխդ էլ կախ քցիր,
Ինձ պես խռնչալով գնա՛, հեռացի՛ր:
Կատվի ձագ գտնիս, թե հավի ճուտը,
Կե՛ր ու քեֆ արա՛, թո՛ղ էրվի սիրտը:
Տանն էլ մի մնար, որ մեկ խոսք ասեն,
Դուս արի, գնա՛, որ խիալ չանեն:
Օրն հազար մարդի տուն էլ որ քանդես,
Էլի դեռ քիչ ա, որ լավ մտածես»:—
Էսպես եմ արել, էսպես չաղացել
Որ ճրաքուս էկել, աչքերս լցվել:
Դու էդպես փեդի նման չորացել,
Շունչդ դուս կգա, թե մեկ փչեն էլ:
Տեսնինք, ո՞վ ա քեզ ասում՝ ա՛ֆարիմ.
Կամ ինձ բազուխաստ անում, որ պատժվիմ.
Ասած է՝ հաստ ու բարակն է մեկ գին.
Վա՛յ ու հազար վա՛յ բարակ մանողին»:—

Խոզն իր խոզությունն ձեռից չի թողալ:
Մեր եզն սկսեց իր բերանը բանալ:
«Ցեխն ա քո ջանը, գնաս տաս թավալ.

Հալբաթ որ էդպես կուզես դու խոսալ:
Ի՞նչ օգուտ ունի էն քաղցր արեգակն,
Կամ էն՝ երկնքի պայծառ լուսնիակն,
Որ լիս են տալիս, իրանք մեր մտնում,
Մեզանից մեկ քաղցր խոսք էլ չեն լսում:
Կամ անբան երկիրն ո՞ւմնից խեր ունի.
Որ հազար բարի տա ամեն տարի:
Անձրևը գալիս, արևը բացվում,
Սար ու ձոր էնպես ցնծում, ու ծաղկում:
Էն խեղճ մեղրաճանճն էլ որ չի քնում,
Աղքատ, հարստի բերան քաղցրացնում:
Վարդն՝ որ իր հոտը չի պակսացնում,
Ծառն՝ որ իր պտուղն ինքը չի՛ ուտում:
Հողը ծառին է նյութ տալիս, պահում,
Ծառը հողին միշտ շվաք անում, սիրում,
Երկինքն անձրևն ա փայ տալիս երկրին,
Երկիրն ծովերիցն բարձրացնում ամպին:
Սրանք որ չեն ուզում, իրանց մենք պաշտենք,
Ընչի՞ չի պետք է մեկ խեր էլ տանք մենք:
Ի՞նչ վնաս ունիմ, որ ես աշխատում,
Հազար որք, խղճի կարիքն լցնում,
Էս առողջ ջանը էլ ո՞ւր ա տվել
Աստված՝ որ չուզեմ բանի պետք ածել:
Էն երկրի խոտը ի՞նչ սրտով ուտեմ,
Էն աղբրի ջուրը ի՞նչպես ես խմեմ,
Որ աշխարքումս բանի պետք չգամ,
Ի՛մ գլխիս նայիմ, ի՛մ ցավս հոգամ:
Ես հո իմ փորի համար չեմ աշխատում՝
Որ կերն պակսելիս՝ լամ ու տրտնջամ,
Սրբերին էլ ի՛նձ են մատաղ անում,
Ով մեկ մեծ մուրազ ունի իր սրտումն:
Ամա քե՛զ՝ անբա՛ն,
Թուրքն էլ չի սիրում, ջհուդն հո ատում:

Ո՛չ գառն ա հետդ ման գալը ուզում,
Ո՛չ կով ու ոչխար իրանց մեջ թողում:
Ով մեկին մեկ մատ անուն է դնում,
Խո՛զ է ասում նրան, կամ գոջի կանչում:
Քրիստոնեն էլ որ քեզ տուն է թողում,
Թուրքի, ջհլդի ջգրու է անում:
Մեյդան դուս գալիս, շունն էլ վրեդ հաչում:
Մեր հացն որ չուտես՝ կարո՞ղ ես ապրիլ,
Որ էդպես ռեխդ սկսում ես ցրվիլ:
Խոզինը ցեխն է կամ մուռտառ տեղը,
Լավ միտքն ե՞րբ կընկնի նրա խելքն, ղուղը:
Դու լագողներիդ՝ է՛դ խրատը տու՛ր,
Որ տնաքանդություն անեն, հասնին ուր:
Ես իմ աշխատանքն ձեռից չեմ թողալ,
Քանի շունչ ունիմ ու խեր կարեմ տալ,
Իմացողի համար ես չեմ աշխատում,
Խեր տալն եմ ուզում, տեսնում, մխիթարվում»:—